

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ
ՍՍՌ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ՝
ՍՍՌ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ ՍՏԱԼԻՆԻ
ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

Սովետական Միության Մինիստրների խորհրդի Նախագահ՝ Գեներալիսսիմուս Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի մահը անփոխարինելի կորուստ է համայն մարդկության և Սովետական Միության ու նորա բազմաթիվ ազգությունների համար: Ի դեմս Հանգուցյալի՝ մարդկությունը կորցնում է մի նշմարիտ մարդասեր անձն, որ, իր վարած խաղաղասեր քաղաքականությամբ և խաղաղության գաղափարի պաշտպանությամբ ու ղեկավարությամբ, ձգտում էր ստեղծել ազգությունների միջև եղբայրություն ու համերաշխություն, պետությունների միջև՝ համագործակցություն, նպատակ ունենալով մարդկությունը աղետներից և աշխարհը ավերից զերծ պահել և հաստատել այնտեղ երջանիկ կյանք:

Ի դեմս Հանգուցյալի՝ Սովետական Միությունը կորցնում է իր հանճարեղ առաջնորդին, որ, իր կյանքի գնով և նվիրված անդուլ աշխատանքի շնորհիվ, զարգացնելով երկրի կուլտուր-կրթական, տնտեսական և տեխնիկական կյանքն ու զորացնելով նորա զինական ուժը, բարձրացրեց Պետության հեղինակությունն ու արժեքը և դարձրեց նորան աշխարհի ամենաառաջնակարգ Պետությունը: Սովետական Միության դաշնակից պետությունների ու ազգությունների միջև հաստատելով բարյացակամ ու եղբայրական հարաբերություն և համագործակցություն և աջակցելով նոցա տնտեսապես, զարգացրեց նոցա կուլտուրապես, զորացրեց տնտեսապես և երջանիկ դարձրեց:

Ի դեմս Հանգուցյալի՝ կորցրեց մանավանդ հայ ժողովուրդը իր նշմարիտ բարեկամին ու պաշտպանին, որի շնորհիվ հայ ժողովուրդը ավերակներից հարություն առավ, իր պատմական իղձին հասավ՝ պետական ազգ դարձավ և իր կուլտուրական ու տնտեսական զարգացմամբ և արդյունաբերությամբ այսօր իր բարգավաճման ու վերելքի բուռն շրջանն է ապրում 16 հավասար դաշնակից սովետական պետությունների շարքում:

Հայ հոգևորականությունն ու հայ հավատացյալ ժողովուրդը անմոռանալի Հանգուցյալի դագաղի առաջ հրապարակով հայտնում են իրենց խորին երախտագիտական զգացմունքը՝ ուխտելով Նորա անունն ու հիշատակը ընդմիշտ անմոռաց պահել իրենց սրտերում:

ԳԵՈՐԳ Զ.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ